


(Տոնահանդեսին խոսք ասաց նաև մեր անվանի բանաստեղծուհին):



ՖԻԳԱՅԻՆՆԵՐ

ՍԻՆՎԱ
 ԿՍ.ԳՈՒՏԻԿՅԱՆ

Աշնակ գյուղը միշտ եղել է մեր հիշողության մեջ, մեր սրտերում, մեր հոգում, մեր բանաստեղծությունների տողերում:

Մի բանի անգամ ես ներկա եմ եղել ֆիդայիներին նվիրված ավանդատուներին: Սակայն այսօր ուրիշ է: Երկար տարիներ կառուցվելուց հետո, վերջապես տունը ավարտին հասավ, և ես այսօր անշափ ուրախ եմ, որ համազգային մասշտաբով ծնվեց մեր սուրբ նահատակների, մեր սուրբ հերոսների տունը, որ Ձեր թույլտվությամբ ես պիտի կոչեմ **ՖԻԳԱՅԻՆՆԵՐ**:

Ամեն մի ժողովուրդ հպարտ կլինեք, եթե նման հերոսներից գոնե մեկն ունենար, բայց մենք ունեցել ենք տասնյակներ, հարյուրավորներ, և ահա 70 տարի շարունակ այդ հերոսները մնացել են մեր հիշողության ծալքերում մոռացված կամ փակված և այսօր մենք մեր հարգանքի տուրքը պետք է բերենք բոլոր նրանց, ովքեր մեր մեջ վերականգնեցին նրանց սուրբ հիշատակը:

Առաջին հերթին ես ուզում եմ հիշել մեր ժողովրդի դժվար կենսագրությունը կիսող Խաչիկ Դաշտենցին,

որի «Ռանչպարների կանչը» մեր հիշողությունում վերականգնացրեց ազգային ազատագրական շարժմանը նվիրված քաջ ֆիդայիների պատմությունը:

Ես ուզում եմ հիշել Մուշեղ Գալշոյանին, որին ես նվիրել եմ բանաստեղծություն, այդ ուշացած ֆիդայուն, որը, պարզվեց, որ բոլորովին էլ ուշացած չէ, և այսօր նրա հիշատակը ապրում է ու կենդանի է մեզ հետ:

Թանկագին բարեկամներ. այսօր մենք հավաքվել ենք այստեղ ուրախանալու, սակայն մեր սրտի խորքում կակնում է մի ահավոր վերք: Մեր պատմության ամենադաժան, ամենաողբերգական պահերից մեկն է սա, որ հիմա չոքել է մեր ժողովրդի վզին: Մենք մի ամբողջ տարի մեզ նվիրեցինք դարաբաղյան արդար պայքարին: Մեր այդ պայքարը, սակայն, շատերի կողմից և հարևանների կողմից հանդիպեց չհասկացվածության, ավելին՝ հանդիպեց կատաղի դիմադրության: Սակայն մենք կարողացանք դիմանալ այս ամենին: Եվ արդեն կարծես թե սպառվում էր մեր համբերության անսպառելի պաշարը, երբ պայթեց այս երկրաշարժը: Ես չգիտեմ, թե այդ ինչ ուժ ու կորով կա մեր ժողովրդի մեջ, որ մենք ապրում ենք և լցված ենք արելու վճռականությամբ: Օտար մասնագետները, երկրաշարժի արդյունքները կամ հետևանքները քննության առնելիս, խոստովանեցին, որ այդպիսի երկրաշարժի իրենց ուսումնասիրությունների մեջ համարյա չեն հանդիպել և նույն պահին չմոռացան նշել, որ այդպիսի ժողովրդի նույնպես չեն հանդիպել:

Մենք, հիրավի, բիրիական ժողովուրդ ենք, մեր արյան մեջ կան աղետներին դիմադրելու գեներ և այդ գեները այսօր մեր մեջ ապրում են և, այնուամենայնիվ, ես եկել եմ ձեզ մոտ, թանկագին բարեկամներ, ձեզանից ուժ, ձեզանից կամք ու ավյուն ստանալու, սիրելի աշնակցիներ, ձեզնից, Գևորգ Չաուշի, Աղբյուր Սերոբի, Կայծակ Առաքելի, Մախլուտոյի և, ջանավաճող, մեր անգուգալկան գորավարի, մեծն Անդրանիկի շառավիղներ, ձեզնից, մեր աշխատավոր ժողովուրդ:

Ղարաբաղը մեր պատմական հիշողության անբաժանելի մասն է, մենք հիշողության ժողովուրդ ենք, մեր պատմական հիշողությունը ձգվում է հազարավոր տարիներ, եթե խոսում են մեր ժողովրդի մասին, պետք է չմոռանան մեր հիշողությունը: Մենք այն ժողովուրդն ենք, որ չենք մոռացել մինչև հիմի Ավարայրի ճակատամարտը և 1500—1600 տարի շարունակ, ամեն տարի նույնքերին թե հոկտեմբերին, հավաքվել, հիշել ենք Ղարաբաղի մահապարտների հիշատակը: Իսկ մեզ ուզում էին գոռով կտրել մեր հիշողությունից, ուզում էին մեզ մոռացնել տալ ապրիլի 24-ը, ցեղասպանությունը: 2հաջողվեց: 1965 թվականի ապրիլի 24-ին նորից զարթնեց այս պատմական հիշողությունը, որը գալիս է դարերից և կարծես թե դարերին է ձուլված: Այդ հիշողությունն էր, որ Երևանի փողոցներում ուղեկցում էր մեր ժողովրդին դեպի հրապարակ, դեպի պանթեոն, ուղեկցում էր, որպեսզի տեր կանգնեն իրենց անցյալին, տեր կանգնեն իրենց ժառանգությանը, իրենց Սասնա տանը, հայոց հողերին, ահա, այսօր նորից մեր պատմական հիշողությունը ոգեկոչում ենք, որպեսզի ապրենք, և այսօր նորից մեր ֆիդայիները պետք է մեզ ներշնչեն ապրելու, կառուցելու մեր ավերված երկիրը:

Մենք հպարտանում ենք մեր երիտասարդներով: Մենք ուզում ենք, որ նրանք իրենց այդ անսպառ էներգիան շարունակեն գործի դնել ի բարօրություն մեր ժողովրդի, իսկ հիմա մեր ցավերը անտանելի շատ են: Երեկ երեկոյան ինձ զանգահարեց Սեդա անունով մի կին, որը նոր էր վերադարձել Սպիտակի շրջանի Գեղասար գյուղից և ասաց, որ այն տեղ մարդիկ բոլորովին մոռացված են, որ երեխաները անտուն են, համարյա առանց հագուստի: Իսկ ի՞նչ են անում մեր ղեկավարները, ի՞նչ են անում մենք, դուք, բոլորս: Ես կուզեմայի, որ այս գեղեցիկ տունը տոնելու հետ միասին մենք չմոռանանք մեր առօրեական հոգսերը: 2է՛ որ ֆիդայիները, մեր պանծալի հերոսները, որոնք իրենց տուն ու տեղը թողած քաշվել էին լեռները, զիջեցին իջնում էին սարերից և իրենց տան գործը, վարն ու ցանքն էին անում, որպեսզի իրենց ընտանիքը, իրենց երեխաները քաղցած չմնան: Եկեք նաև սրանով հետևենք մեր ֆիդայիների օրինակին: Ես կուզեմայի այն ավանդականը, որ հերոսաբար մտել է մեր ժողովրդի պատմության մեջ, պահպանենք մենք: Քանի որ այսօր ես պատմեցի մեր Գեղասար գյուղի մասին, գնանք սրբենք մեր երեխաների արցունքները, հագցնենք նրանց, կառուցենք նրանց տները: Չմոռանանք մեր ավերված գյուղերն ու քաղաքները: Ես, օրինակ, իմ հատուկ դժգոհությունն ունեմ այդ շրջանների և մեր բոլոր շրջանների ղեկավարների նկատմամբ: Երբ որ Լենինականում սգո համերգ էր, ես հազիվ հնարը գտա իմ անելիքն ասելու, ասելու, որ այն ժամանակ յուրաքանչյուր տան մեջ մահեր կային, երբ մեր ամբողջ ժողովուրդը սգի մեջ էր, ահա այդ ժամանակ, խորհրդային որոշ ղեկավարներ, գործարանների որոշ ղեկավարներ պատժում էին բոլոր նրանց, ովքեր մասնակցել էին միտինգներին և կամ ճառեր էին ասել: Ես գիտեմ, որ այսօր էլ այդպիսիները կան: Մենք մեղադրում ենք ուրիշներին, որոնք անարդար են վերաբերվել «Ղարաբաղ» կոմիտեի նկատմամբ, մեր շարժման ակտիվ գործիչների նկատմամբ: Սակայն այստեղ գտնվում են մարդիկ, որոնք նույնպես նույն ձևով են մտածում ու վարվում: Ղարաբաղյան շարժումը համաժողովրդական շարժում է: Նրան մասնակցել ենք բոլորս՝ և՛ դուք, և՛ մենք, և՛ ղեկավարությունը, մասնակցել է մեր ամբողջ սփյուռքը, մասնակցել են մեր ֆիդայիները, մեր Չաուշը, մեր Անդրանիկը: Դա մեր ժողովրդական մեծ վերածննդի շարժումն էր: Ես անհրաժեշտ համարեցի այստեղ, այս հանդիսավոր օրը խոսել այդ մասին, որպեսզի բոլորը հիշեն, որ օրվա համար չէ, որ ապրում են մարդիկ, որ մեր լավ ու վատ գործով ենք մենք մտնում պատմության մեջ:

Ղարաբաղյան շարժումը կմտնի մեր պատմության մեջ ինչպես Ավարայրի ճակատամարտը, ինչպես Անիի պատերի տակ մղված պատերազմը, ինչպես Սարգսրապատը, ինչպես ֆիդայական շարժումը և վա՛յ նրանց, ովքեր դեմ կգնան այս շարժմանը, իրենց եղյայ և չեղյալ իրավունքներով կուզենան ոչնչացնել ազատության սերմերը: Այսօր մենք բոլորս հավաքվել ենք կրկին ու կրկին անգամ տոնելու մեր ժողովրդի վերածնունդը, մեր անկախության տունը, որ դարձավ խորհրդանիշը այն բանի, որ մենք ՄԻՇՏ ԷԼ ունեցել ենք՝ **ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**: Մեր հակառակորդները հանդգնում են ասելու, որ չորրորդ դարից հետո մենք պետականություն չենք ունեցել: Բոլոր այս խաչատուակ հայտարարությունները զրպարտություն են մեր ժողովրդի հասցեին, սակայն ես չեմ ուզում այս սուրբ օրը պղծել, արատավորել նրանց հիշելով:

Մեզանից յուրաքանչյուրի մեջ պետք է մշտապես անցան մնա մեր մեծ գործիչների հիշատակը և ոգեկոչի մեզ, որպեսզի շարունակենք մեր ապրելու մեր վերջնական հաղթանակին հասնելու համար:

Մեզանից յուրաքանչյուրի մեջ պետք է մշտապես անցան մնա մեր մեծ գործիչների հիշատակը և ոգեկոչի մեզ, որպեսզի շարունակենք մեր ապրելու մեր վերջնական հաղթանակին հասնելու համար:

